

Ն Ա Տ Ա Ք Ա Ն

«Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 1998-2002 թվականներին» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության այդ տարիների արտաքին գործառնությունների վերաբերյալ տվյալները:

Վճարային հաշվեկշիռն իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն (հաշվեկշիռ), որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործառնություններն այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների¹ և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, եկամուտների հոսքերի, ընթացիկ տրանսֆերտների տեսքով, ինչպես նաև գործառնություններ, որոնք կապված են ֆինանսական պահանջների և պարտավորությունների հետ:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից՝ ընթացիկ և կապիտալի ու ֆինանսական: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ կապիտալի և ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտները: Ըստ մեթոդաբանության ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն գործնականում միշտ

¹ ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձ և այլ կազմակերպություն, որոնց մշտական գտվելու վայրը (տվորաբար 1 տարուց ավել) կամ կենսական և տնտեսական շահերի կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում, ընդ որում ակտիվային հաշվի ավելացումը գրանցվում է դեբետում, իսկ նվազումը՝ կրեդիտում, պասիվային հաշվի ավելացումը գրանցվում է կրեդիտում, իսկ նվազումը՝ դեբետում: Կրկնակի գրանցման մեթոդի կիրառման պատճառն այն է, որ, որպես կանոն, տնտեսական գործառնություններն իրենցից ներկայացնում են տնտեսական արժեքների (ֆինանսական, նյութական) փոխանակում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ վճարային հաշվեկշիռն առաջին անգամ կազմվել է 1993թ. համար: Սկզբնական շրջանում այն կազմվել է կրճատ տարբերակով, իսկ 1996թ. սկսած ԱՄՆ-ի կողմից մշակված վճարային հաշվեկշիռի միասնականացված հոդվածներին համապատասխան, ընդ որում 1999թ. նոր՝ ավելի ընդլայնված, տարբերակով:

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռի դինամիկան ցույց է տալիս, որ ընթացիկ հաշվի պակասուրդը վերջին տարիներին ունեցել է նվազման միտում: Ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պայմանավորված է ապրանքների գծով գոյացած բացասական հաշվեկշռով: Ֆինանսական հաշիվը բոլոր տարիների համար եղել է դրական:

Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության, կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացված վիճակագրական հետազոտությունների, բանկային և ֆինանսական համակարգերի տվյալները: Որոշ ցուցանիշներ

(ապահովագրական վճարներ, ՀՀ ռեզիդենտ ճանապարհորդների ծախսերն արտասահմանում) ստացվել են գնահատականների միջոցով, ինչն իրականացված է Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) մեթոդաբանությամբ:

ՀՀ Վճարային հաշվեկշռի հոդվածների տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրներն են՝

Ընթացիկ հաշվի

- **ապրանքների գծով՝** արտաքին առևտրի վիճակագրությունը, որն ստացվում է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից և ՀՀ էներգետիկայի նախարարությունից, ինչպես նաև հետազոտության միջոցով տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքների վերաբերյալ տվյալներից: Ներմուծման վերաբերյալ տվյալները ներառում են նաև Հայաստանի ռեզիդենտների կողմից ապրանքների տեսքով ստացված օտարերկրյա օգնությունը և ցվերները,
- **ծառայությունների գծով՝** տարբեր տրանսպորտային, ապահովագրական, տուրիստական, կապի, ֆինանսական և այլ ծառայություններ մատուցող կազմակերպություններում իրականացվող հետազոտությունների տվյալները,
- **եկամուտների գծով՝** սեզոնային և այլ ծառայողների փոխանցումների վերաբերյալ տվյալներից, հիմնականում հիմք ընդունելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից տնային տնտեսություններում կատարված սոցիալական հետազոտության արդյունքները, միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և ՀՀ Կենտրոնական բանկից ստացված պետական պարտքի սպասարկման վերաբերյալ տվյալները: Այլ եկամուտների գծով տվյալներն ստացվում են

կազմակերպությունների հետազոտություններից,

- **ընթացիկ տրանսֆերտների գծով՝** մարդասիրական օգնությամբ ստացված բեռների և դրամաշնորհների մասին տվյալներից, ստացված ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և միջազգային կազմակերպություններից, ինչպես նաև տնային տնտեսություններում կատարված սոցիալական հետազոտության արդյունքներից:

Ֆինանսական հաշվի գծով տվյալները հավաքագրվում են հիմնականում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից, ՀՀ Կենտրոնական Բանկից և օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններից:

Քանի որ աղյուսակներում տվյալներն արտացոլված են ստորակետից հետո երկու միշտ, հնարավոր է, որ հանրազանմարներում լինեն 0.01-0.03 հարյուրերորդականի անճշտություններ: Դրանք թվերի կլորացման արդյունք են:

Ժողովածուի սպառողներից խնդրվում է առաջացած հարցերի և առաջարկությունների դեպքում դիմել ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Թողարկման պատասխանատու
Ա. Պետրոսյան

վճարային հաշվեկշռի և արտաքին
առևտրի բաժնի պետ
հեռ.52-39-04(165)

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	0
տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0

